

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ «ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ»
ԵՐԿԻ ՄԻ ԱՆՀԱՅՏ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր – Երեմիա Քյոմուրճյան, Կ. Պոլիս, աղբյուրագիտություն, պատմագրություն, օրագրություն, հիշատակարան, բնագրագիտություն, ձեռագիր

Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի համակողմանի ուսումնասիրությունը կայուն հանգրվան կարող է դառնալ XVII դարի «նոր վերելքի» շրջանի հայ պատմագրության զարգացումն ու առանձնահատկությունները առմիշտ սահմանելու համար: Այս ճանապարհին լուծելիք առաջին խնդիրներից մեկը «Օրագրության» աղբյուրագիտական հենքը ճշտորոշելն է: Նման մի փորձ անելու առիթ մեզ ընձեռեց հայերեն ձեռագրերի հիշատակարանները հերթական անգամ պրպտելը, որի նպատակը սկզբում ամեննին «Օրագրութիւնը» չէր: Ինչնէ, Յելլի համալսարանի Բայնեկե գրադարանում (The Beinecke Rare Book and Manuscript Library) պահվող մի հայերեն Հայսմավուրքի (Z107.008) հիշատակարանի առաջին իսկ տողերն ընթերցելիս մեզ համար ակնհայտ դարձավ դրա կապը Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի հետ: Հիշատակարանը գրի է առնվել 1648 թ. Կ. Պոլսի Սուրբ Սարգիս Զորավար եկեղեցում Քրիստոսատուր գրչի ձեռքով (ստացողներ՝ Հովհաննես և Խաչատուր երեցներ): Դատելով Երեմիա Չելեպիի կենսագրության մեր ունեցած տվյալներից՝ նրա մուտքը Կ. Պոլսի բոլոր հայկական եկեղեցիներ առանձնապես խոչընդոտների չէր հանդիպում, բայց դրանց թվում նրան հատկապես հոգեհարազատ էր այս Սուրբ Սարգիս Զորավար եկեղեցին, որը նա անվանում էր «եկեղեցի մեր»¹. Երեմիայի հայրը՝ Մարտիրոս Քյոմուրճյանը, այստեղ է մատուցել քահանայական իր ծառայությունը: Հայ եկեղեցու հոգևոր աստիճանակարգում իր առաջին ու միակ քայլը Երեմիա Քյոմուրճյանը արել է դարձյալ այս եկեղեցում՝ ստանալով դպրական տվչություն²: Այսպիսով, այն ուղին, որով այս հիշատակարանը կարող էր անցնել Երեմիա Քյոմուրճյանի ձեռքը, բավական կանխատեսելի է: Քանի որ Օսմանյան կայսրության արտաքին ու ներքին քաղաքական անցքերի մասին հիշատակությունները մշտապես եղել են Երեմիա Քյոմուրճյանի երկերի առանցքային կողմերից մեկը, և «Օրագրութիւնը» ևս բացառություն չի կազ-

¹ Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանի, հրատ.՝ Մեսրոպ արքեպ. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 6, 24 (այսուհետև՝ «Օրագրութիւն»):

² Նույն տեղում, էջ 6:

մել, հիշատակարանում տեղ գտած բավական ընդարձակ վկայությունները, որ վերաբերում են 1648 թ. կայսրությունում ենիչերիների պատրաստած պալատական հեղաշրջմանը, լիովին տեղավորվում են այս երկի կառուցվածքային և թեմատիկ սահմաններում, ինչը, բնականաբար, Քյոմուրճյանի համար եղել է դրանք իր աշխատանքում օգտագործելու շարժառիթը: Արդ, 1648 թ. հիշատակարանի և «Օրագրության» սերտ առնչությունը փաստող բնագրային մի երկու համադրություն կատարենք.

1648 թ. հիշատակարան

...ի մետասան յաւուրց Յունիս ամսոյ, յաւուր կիրակէի, յետ մտանելոյ արեգականն, զի հանդերձեալ էր ժամ նսեմութեան, եղև յանկարծակի ճայթուն մեծ եւ ահագին, թընդին առեալ յերկիր շարժեցաւ, եւ դողալով սարսեալ երերաց քաղաքս ամենայն, զի նաւք ի վերայ ծովուն, առ յիրեարս հարեալ մնացին, եւ սաստիկ բախմանէ յետս եկեալ խաղային, զի հագիւ դադարեցաւ սաստիկ պատիժ պատուհասին: Իսկ ողորմածն եւ մարդասէրն Աստուած, իւր անբաւ մարդասիրութեամբն, ինայեաց զգինս կաթուածոյ սուրբ յարեանն իւրոյ, եւ վերստին շնորհեաց զանցանս մեղականացս¹:

1648 թ. հիշատակարան

Եւ իբրեւ այս այսպէս պատրաստեցան յերկոցունց կողմանց ի պատերազմ, ճակատ առ ճակատ, յայնժամ յարեան ի վերայ միմեանց. իսպահին եւ յէկիչարին, զագանացեալ զօրութեամբ: Քաջքն՝ խիզախէին,

Օրագրութիւն

[1648] Յունիսի ամսոյ ԺԱ յաւուր Կիրակէի յետ մտանելոյ արեգականն ի մուտս՝ եղև յանկարծակի ճայթուն մեծ և ահագին, զի թնդին առեալ երկիր շարժեցաւ և դողալով սարսեալ երերաց քաղաքս ամենայն, և նաւք ի վերայ ծովուն առ յիրեարս հարեալ մնային և ի սաստիկ բախմանէ յետս եկեալ խաղային. զի երեք անգամ մի ի վերայ միոյ շարժեաց և հագիւ դադարեցաւ սաստիկ պատիժ պատուհասին, հայեցեալ ամէնողորմ Ստեղծողն յողբ և ի ճիչ տղայոց անմեղաց և միանգամայն ամենայն սեռի²:

Օրագրութիւն

Եւ կացին յերկուց կողմանց ճակատ առ ճակատ և յարեան ի վերայ միմեանց զագանացեալ զօրութեամբ. քաջքն խիզախէին, արիացեալքն գոչէին, սուսերքն փայլփայլէին և սաղաւարտքն շողշողային և ի բազմա-

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, by A.K. Sanjian, Berkeley-Los Angeles-London, 1976, p. 160-161.

² «Օրագրութիւն», էջ 1:

արիացեալքն՝ գոչէին, թանձրամիտքն՝ յիմարէին, եւ վատասիրտքն՝ լքանէին: Սուսերքն՝ փայլփայլէին, եւ սաղավարդքն՝ շողշողային, եւ ի բազմախուռ նիզակացն, որպէս հրաձգութիւնք եռային յերկնից, ի փայլմանէ պատենագէն վառելոցն, ընդ ճառագայթից՝ արեգական միացեալ սոսոսային, որ եւ կոբկոբմունք վահանաւորաց, եւ ճայթճայթմունք լարիցն՝ ի լսելիս մարդկան իլացուցանէին: Եւ աստ էր տեսանել զաղէտ եւ տագնապ մեծի կորստեան նոցա. զի որպէս փայտք՝ հարեալք ի փայտահարաց ի մէջ մայրաց եղեալք ի գետնի. այսպէս եւ նոքայ հարեալք ի միմեանց բազմահար հարուածք. եւ անկեալ ի գետնի դիաթաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց: Ոմանց սկաւառակն յերկուս հերձեալ ըղեղատոյց սատակեցան, եւ ոմանց կլափն ներքին ընդ կոկորդեան ի բաց եղան, եւ ոմանց ընդ միջան յերկուս բաժանեալ հերձաւ. եւ ոմանք գլխահատք կորեան. եւ այլք բազումք կիսամահք լեալք, ոտնոտ եւ ձեռնատ, քրնթատ եւ ակընջատ, անկեալ ի գետնի տքային եւ հեծային, մինչ զի սպառուած շնչոյն՝ կսկծալի հեծեծանօք զհոգիս իւրեանց դառնագին արձակէին: Վասն որոյ լի եղև արեամբ եւ դիակամբք շրջապատ եւ սրահ լայնատարած ճամուն, ներկեցաւ երկիր յարենէ նոցա: Սայլք եւ սանդուխք, սիւնք եւ խարիսխք՝ ի միագոյն լեալ կարմրացան՝ որպէս ծով արեան. եւ զօրքն ըսպահոցն փախստական լեալ

խուռ նիզակացն եւ ի փայլմանէ պատենագէն վառելոցն՝ ընդ ճառագայթից արեգականն սոսոսային: Եւ աստ էր տեսանել զաղէտ եւ զտագնապ կորստեան նոցա, զի որպէս փայտք հարեալք ի փայտահարաց, այնպէս՝ հարեալք ի միմեանց բազմահար հարուածովք՝ անկեալ ի գետնի դիաթաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց: Եւ ոմանք ի փախուստ դառնային եւ ոչ ժամանէին ի տեղի թաքստեան, այլ հասեալքն գնոսա ոչնչացուցանէին. ոմանց սկաւառակն յերկուս հերձեալ ըղեղատոյց սատակէին, ոմանք յերկուս հերձեալ եւ ոմանք գլխահատք, ոմանք կիսամահք լեալ ոտնատ եւ ձեռնատ, քրնթատ եւ ակընջատ տքային եւ հեծային եւ կսկծանօք զհոգիս իւրեանց արձակէին, եւ լի լինէր արեամբ եւ դիակամբք շրջապատ եւ սրահ ճամուն եւ ի միջի նորա եւ յելսն մնարային փախուցելոց զօրաց սպահոց². եւ բազումք հալածեցան եւ գէշք նոցին ընդ նսեմանալ երեկոյին կառաքարձք տարեալ ընկեցան ի ծով, եւ յայնմհետէ ուղիղ ոչ կարէին հայել յերեսս միմեանց, ուր որ հանդիպէին³:

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 163-164.

² Թուրք. sipahi, օսմանյան հեծյալ զինվոր. բառը ունի նաև զորք իմաստը:

³ «Օրագրութիւն», էջ 5-6:

հալածեցան: Որ եւ գէշք նոցա՝ ընդ նսեմանալ յերեկոյեան՝ կառաքարձք տարեալ ընկեցան ի ծով: Որ էր ժամանակս աշնանային, եւ շնչաբերութեան հարաւային հողմոյն, որ եւ անկեալ ի ներքոյ ահագին ծովուս, խառնէր եւ խախալէր, ճոճայր ծովն մեծ եւ սաջէր, ծաւալէր եւ ծփծփայր: Եւ ի սաստիկ հարմանէ յալեացն ի բաց ոստաւ գէշք նոցա, առ ափս ծովուն, իբրեւ կուտակս ձկանց երեւէին, որպէս ուռկանաւ ըմբոնեալ յորսակցաց մարդկան¹:

Բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ «Օրագրության» մեջ վերոնշյալ հիշատակարանի տվյալները ոչ թե սուկ օգտագործված են կամ բնագիր են մտել որոշակի մշակված սկզբունքներով, այլ բառացիորեն տեղափոխվել են 1648 թվականի շարադրանք: Բացառություն են թերևս հիշատակարանում տեղ գտած կյուրթ Քյումուրճյանի կողմից համառոտելու կամ ոչ էական հավելումներ անելու դեպքերը, որոնք, սակայն, շատ բան չեն փոխում: Այնտեղ, որտեղ Երեմիան շեղվել է իր սկզբնաղբյուրից, ավելի ընդարձակել հաղորդած տեղեկույթի շրջանակները, այնուամենայնիվ մինչև վերջ չի ձեռքագատվել հիշատակարանի ազդեցությունից, ինչի վկայությունն են, օրինակ, ստորև արված ընդգծումները, որ, կարծում ենք, պատահական համընկնումներ չեն.

1648 թ. հիշատակարան

...Վառեալք եւ սպառագիներալք, եկեալ ժամանեցին ի մեծանիստ եւ լայնատարած տեղին, որ կոչի Յէնկի ճամի, գոր ի վերոյ գրեցաք, **յորում կայացեալ կայ տեղին յայն՝ արձանս եռակ, որ եւ մինն ի նոցանէ եռակահիւս ձուլածութեամբ ձեւս վիշապայունի ընդ յինքեանս¹:**

Օրագրութիւն

Եւ եկեալ խուռն ամբոխիւ հասին ի ժամադրեալ տեղիսն՝ լայնատարած և մեծասարաս աղօթարանն իւրեանց, որ կոչի Եէնկի ճամի², ի կողմս արևելից շինեալ Սուլթան յԱհմէտէ հօրեն Իպրահիմի, որ է հանդէպ պալատի թագաւորին. **յորում սրահի կայացեալ կայ ի Յու-**

¹ Նույն տեղում, էջ 163:

² Պետք չէ շփոթել Ստամբուլի Նոր կոչված մզկիթի հետ (թուրք. Yeni Cami կամ Valide Sultan Camii), որ կառուցվել է 1597-1665 թթ. և տեղակայված է Սուլթանահմեդ հրապարակից (նույն ինքը՝ Կոստանդնուպոլսի ձիթնաբարանը (թուրք. At Meydanı) դուրս՝ ծովեզերքին՝

նաց՝ ի տեղի ձիրնթաց ասպարհի-
սին այն արձանս եռակ. մինն բարձր
քարահիւս շինեալ, որ երկայնութիւն
ունի իբր մարդաչափս եօթանց¹. և
երկրորդն խոնարհ քան զնա քար և
փերթ կանգնեալ ի վերայ չորից ոտից
քարանց շինեալ ի Թեոդոսէ². և եր-
րորդն ի նոցանէ է պղնձի եռակահիւս
ձուլածութեամբ, եռ գլխեան ի ձև
վիշապաց ունի ընդ ինքեան³: Ասեն
վասն սորա՝ թէ տըլըսմ⁴ է յաղագս
օձից, զի մի բազմացի ի քաղաքս և
կամ թունաւորեացի⁵:

Թերևս միակ ուշադրության արժանի առանձնահատկությունը, որ
կարելի է նշել այս երկու գործն իրար կապող ուղու մասին, այն է, որ, մեր

Ոսկեդջուրի վրա գցված Գալաթա կամրջի հարավային ծայրին: Ինչպես ցույց է տալիս հարա-
կից հուշարձանների նկարագրությունը, որին անդրադարձել ենք ստորև, խոսքը Սուլթան
Ահմեդ մզկիթի մասին է, որ 1609-1616 թթ. կառուցել է Իբրահիմ I-ի հայրը՝ Ահմեդ I-ը (1603-
1617): Եվրոպացիները սրան տվել են նաև Կապույտ մզկիթ անունը: Հիշատակված «Ենկի
ճամի» անվանաձևը, հավանաբար, պետք է բացատրել շինության նորակառույց լինելու հան-
գամանքով, սակայն այն հետագայում քաղաքացիություն չի ստացել, քանի որ մեր բոլոր փոր-
ձերը՝ գտնելու թուրքերեն գեթ մեկ հիշատակություն այս անվամբ, հաջողություն չունեցան:

¹ Կոստանդինի (իմա՝ բյուզանդական կայսր Կոստանդին VII (913-945) կոթողն է, սկզբնական երկարությունը եղել է 32 մ, ներկայումս՝ 21 մ:

² Թեոդորոսի կամ Եգիպտական կոթողն է՝ Եգիպտական Թութմոս III փարավոնի հաղ-
թական արշավանքներից մեկին նվիրված այս կոթողը IV դարում բյուզանդական կայսր Թեո-
դորոս I Մեծի (379-395) հրամանով տեղափոխվել է Կ. Պոլիս և մինչ օրս հանգրվանում է այն-
տեղ:

³ Ք. ա. 479 թ. Պլատեայի մոտ հույներից պարսիկների պարտությունը խորհրդանշող
հանրահայտ բրոնզաձուլյ Օձաձև սյունն է, որ Դելփիքից Կ. Պոլիս է բերվել Կոստանդին I
Մեծի (306-337) հրամանով: Հետաքրքրական է, որ կոթողը ձուլվել է պարտված պարսից
զինվորների վահաններից:

⁴ Խոսքը թալիսմանի մասին է (հուն.՝ τέλεσμα):

⁵ «Օրագրութիւն», էջ 4: Այս հատվածը տեղ է գտել Երեմիա Քյոմուրճյանի մեկ ուրիշ՝
«Մտամպոլոյ պատմութիւն» երկի մեջ ևս.

«Ի ձախս երեւի մեզ դէմ՝ ճամին մեծ, որ Ահմէտ սուլթան,

Որ է վեց մինարէիւք հայի սա ընդ գաւիթն Աթ մէյտան:

Ուր կայ արձանն եգափերթ՝ զոր կանգնեաց Մեծ Թեոդոսն այն,

Հէլէն եւ լաթին գրովք՝ եւ գիտնոց դրոշմանըջան:

Ուր գպըղընձէ եռահիւսն եռագլուիւք վիշապք բաց բերան,

Տըլ ըսմ լէօն սօֆօսի՝ սակ օձից որ աստ չերևան,

Այլ ի վայրէ քարահիւս բարձրագոյն քան զայն որ ասացան,

Որք սողան ելնուն ի ծայրն՝ թագաւորք պաղշիշ նոցա տան», **Երեմիա Չէլէպի Քեօմիւր-
ճեան**, Մտամպոլոյ պատմութիւն, հրատ. եւ ծանօթ.՝ Վ. Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 10:

համոզմամբ, 1648 թ. վերաբերող այս շարադրանքը Երեմիա Քյոմուրճյանը «Օրագրութիւն» է մտցրել հետագայում՝ պայմանավորված այդ երկի թեմատիկ ընդգրկման ծավալմամբ: «Օրագրութիւնը» ներառում է 1648-1662 թթ. պատմություն (բացակայում են միայն 1651 թ. անցքերը), 1648 թ. Երեմիա Քյոմուրճյանը եղել է 11 տարեկան, չենք կարծում, որ այս տարիքում նա ծրագրել էր գրել մի այնպիսի ծավալուն երկ, ինչպիսին «Օրագրութիւն» է: Ավելի վաղ մենք առաջ էինք քաշել այն տեսակետը, որ սկսած 1649 թ.՝ նա այս գործը շարադրել է իբրև օրագիր՝ ներկայացուցչական մի պատվիրակության՝ դեպի Երուսաղեմ կատարած ուխտագնացության հանգամանքները հընթացս գրառելու նպատակով, սա էլ, ըստ էության, եղել է այս գործի շարադրման նրա նախնական շարժառիթը¹:

Քանի որ սկզբնաղբյուրից օգտվելու Քյոմուրճյանի ունեցած գործիքակազմը, ինչպես վերը արդեն տեսանք, բավական աղքատիկ է, և նյութի հետ հարաբերվելու հեղինակի կիրառած միակ էական հնարքը օգտագործված սկզբնաղբյուրի անունն անտեսելն է, կարելի էր այլևս չխոսել 1648 թ. այս հիշատակարանի և Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի միջև եղած աղբյուրագիտական աղերսների մասին: Մակայն մեր ուշադրությունը գրավել է մի հարց ևս՝ այս երկու սկզբնաղբյուրի ժամանակագրական համակարգում տեղ գտած շեղումները: Օսմանյան կայսրության պատմական անցքերը ժամանակագրական անճշտություններով են տրված թե՛ հիշատակարանում և թե՛ Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկում²: Մի կողմից՝ այս երկույթը պայմանավորված էր, կարծում ենք, նրանով, որ հայկական սկզբնաղբյուրները մասը չէին օսմանյան պաշտոնական պատմագրության. ներկայացվող հեղինակները դեպքերին ականջալուր ու ականատես չէին, ուստի հաճախ չէին կարող օրվա և ժամի ճշգրտությամբ ներկայացնել

¹ Տակավին անձանոթ լինելով այս հիշատակարանին՝ «Օրագրության» 1648 թ. ներկայացնող շարադրանքի ռճական և այլ տարբերությունները նկատելով, այս հատվածի՝ հետագայի ընդմիջարկություն լինելու մասին տեսակետը մենք առաջ ենք քաշել ավելի վաղ, տե՛ս **Այվազյան Գ.**, Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկը (աղբյուրագիտական դիտարկումներ), Հայոց պատմության հարցեր, 15, Երևան, 2014, էջ 91-92: Այժմ դա փաստվում է նաև այս հիշատակարանի տվյալներով:

² Այս աշխատանքի շրջանակներում մենք ուշադրություն ենք դարձրել մասնավորապես օսմանյան վեզիրների կառավարման թվականների վերաբերյալ «Օրագրության» հաղորդած տվյալներին: «Օրագրության» ժամանակագրական ընդգրկումը համեմատական է օսմանյան 16 վեզիրի կառավարման շրջաններին, բացառությամբ երկու վեզիրի, որոնք իշխել են 1651 թ. միջոցին («Օրագրության» մեջ 1651 թ. շարադրանքը բացակայում է), մնացածների նշանակման կամ պաշտոնանկման հանգամանքները մեծ կամ փոքր չափով տեղ են գտել սկզբնաղբյուրի շարադրանքում: Առանց բացառության բոլոր հիշատակված վեզիրների պաշտոնավարության ժամանակագրական սահմանները Երեմիա Քյոմուրճյանի կողմից ներկայացված են մի քանի օրվա տարբերությամբ և չեն համընկնում մերօրյա պատմագիտության սահմանած ժամանակագրական տախտակների տվյալներին:

իրադարձությունները¹: Մյուս կողմից՝ հանդիպող սխալները երբեմն արդյունք են ժամանակագրության հարցում հեղինակների ցուցաբերած որոշակի անփութության ու անուշադրության²:

1648 թ. հիշատակարան

Իսկ ահագին հրաշա այս, գուշակումն եղև արտաբերելի իրիս այս, զի ի գրաւել քառակ տասանց եւ եւթից, յաւուրց Յուլիսի ամսոյ եւ յաւուրս ուրբաթու ի մէջ գիշերի, դղըրդեցաւ քաղաքս: Եւ բամբ մարդկան ի մի վայր գումարեցան. ուլամայք եւ սուլամայք, մեծամեծք եւ իշխանք, զօրք եւ զինաւորք, ամենեքեան խորհուրդ առին ի միասին եւ խորհեցան սակս սպանման թագաւորին: Եւ ընդ լուսանալ առաւօտուն, վերացաւ աղմուկ մեծ, եւ խռովութիւն յոյժ: Յայնժամ հրամայեցին փակել դրունք քաղաքիս, եւ եղին պահապանս ի վերայ նոցա մեծաւ զգուշութեամբ պահել, որպէս ոչ էր հնար յումեք անցանել ի դրանցն, եւ կամ հանել զմեռեալս եւ տանել առ ի թաղումն: Եւ ի նոյն վայրի ըստ իւրեանց կամացն՝ կարգեցին նախարար եւ դատաւոր ի

Օրագրութիւն

Իսկ ահագին հրաշա այս գուշակումն եղև արտաբերելի իրիս այս. զի ի գրաւել աւուրց ԽԷ-ից, յուլիս ամսոյ ԻԷ յաւուր² Զշի (ուրբաթ-Գ. Ա.) (27 յուլիս) ի մէջ գիշերի դղրդեցաւ քաղաքս եւ բամբ մարդկան ի մի վայր գումարեցան՝ ուլամայք եւ սուլամայք³, մեծամեծք եւ իշխանք, զօրք եւ զինաւորք խորհուրդ առին ի միասին սակս սպանման թագաւորին, առեալ Ֆէթվայ⁴ ի մօլնայէն, որ ասեն մուհտի⁵ Աբդրահիմ⁶ անուն: Եւ ընդ լուսանալ առաւօտուն բարձրացաւ աղմուկ եւ խռովութիւն յոյժ: Յայնժամ հրամայեցին փակել զդրունս քաղաքիս եւ եղին պահապանս մեծաւ զգուշութեամբ պահել, որպէս ոչ էր հնար ումեք անցանել ի դրանցն կամ հանել զմեռեալս եւ տանել ի թաղումն: Յայնժամ ըստ կամաց իւրեանց մեծամեծք եւնկիչերոնցն կարգեցին զօրագլուխ, նախարար եւ

¹ Նույն բանը չի կարելի ասել հայկական միջավայրում ծավալված դեպքերի շարադրանքի մասին. Երեմիա Քյումուրճյանը, լինելով իր օրերի պոլսահայ կյանքի անցուդարձի կիզակետում, հնարավորություն ուներ առավել հավաստի ժամանակագրական տվյալներ հաղորդելու, ինչը և հիմնականում արել է:

² «Եւ այս եղև յաւուրս յամսոյ հոկտեմբերի Ժ եւ Է (17): Եւ անցեալ ի մէջ աւուրս Կ եւ Ը (68 – Գ. Ա.), ի մահուանէ թագաւորին մինչև ցայս վայր», A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 164: Երեմիա Քյումուրճյանը նույնությամբ կրկնում է այս վկայությունը (տե՛ս «Օրագրութիւն», էջ 5): Սուլթան Իբրահիմ I-ը մահկանացուն կնքել է 1648 թ. օգոստոսի 18-ին, ուրեմն հոկտեմբերի 17-ին չէր կարող լրանալ նրա մահվան 68-րդ օրը: Եթե ընդունենք անգամ, որ երկու հեղինակն իրենց հաշվարկը կատարել են իբրև մեկնակետ ընդունելով Իբրահիմի մահվան իրենց հիշատակած օրը՝ օգոստոսի 8-ը, ապա ակնհայտ է դառնում, որ առանց մեր օգնության նրանք ակամայից կասկածի տակ են դնում իրենց հաղորդած ժամանակագրական տվյալների արժանահավատությունը, քանի որ ամենապարզ հաշվարկով՝ օգոստոսի 8-ից հոկտեմբերի 17-ն ընկած օրերի ընդհանուր թիվը 68 չէ:

միջի իւրեանց: Եւ առաքեցին առ թագաւորն, որսալ բան ինչ ի բերանոյ նորա, եւ տալ հաւանութիւն ըստ կամաց նոցա: Եւ վասն յերկիւղի բամիցն՝ ընկալաւ զնա թագաւորն եւ մեծարեաց. եւ ղլաթեալ՝ առ տեղիս իւր առաքեաց: Եւ յայնմ աւուր դադարեցան ի խռովութենէ, եւ ոչ մի ինչ վնաս եղև ի մարդկանէ¹:

դատաւոր ի միջի իւրեանց և եղին վեզիր զՍօֆի Մեհմետ փաշան⁷, որ էր տէֆթերտար⁸, և տէֆթերտար արարին (պարապ), և եենկիչէր աղասի⁹, զՄուրատ աղան¹⁰, և զայլ մեծամեծան մինչև ցփոքունս: Եւ առաքեցին առ թագաւորն որսալ բան ինչ ի բերանոյ նորա, որպէս թէ հաւան իցէ արարմանց նոցա: Եւ վասն երկիւղի նոցա ընկալաւ զնսա թագաւորն և ղլաթեալ առ տեղիս իւրեանց առաքեաց և դադարեցան յայնժամ ի խռովութենէ¹¹:

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 161.

² Այստեղ որոշակի վրիպում կա. Երեմիա Քյումուրճյանը, նույնությամբ Քրիստոսատուր գրչին հետևելով հանդերձ, ինչպես տեսնում ենք, վճռել է նրա հաղորդած վկայությունների հիման վրա որոշ ճշտումներ կատարել, բայց, փաստորեն, իր հաշվարկներում սխալվել է: Իր բնագրում փորձելով տալ ամսաթիվը՝ նախընթացում հիշատակված հունիսի 11-ից նա հաշվել է այդ 47 օրը և ստացել հուլիսի 27-ը, սակայն 1648 թ. հուլիսի 27-ը եղել է ոչ թե ուրբաթ օր, ինչպես նշում են երկու հեղինակները, այլ հինգշաբթի (շաբաթվա օրերը որոշել ենք՝ ըստ «հաւերժական» օրացույցի, տե՛ս **Բրուտեան Գ.**, Օրացոյց Հայոց, Էջմիածին, 1997, էջ 518): Մետրոպ արք. Նշանյանը, որ «Օրագրության» բնագիրը պատրաստելիս Քյումուրճյանի հիշատակած շաբաթվա օրերի համապատասխան ամսաթիվերը ներկայացրել է ճշգրտությամբ, ըստ էության, վստահելով Երեմիային, այս անգամ զերծ է մնացել տոմարագիտական հաշվումներից և բավարարվել է միայն փակագծերում Քյումուրճյանի վկայությանը համարժեք (27 Յուլիս) նշումը անելով: Այս շփոթը, կարծում ենք, առաջացել է, քանի որ Քյումուրճյանը, ի տարբերություն Քրիստոսատուր գրչի, իր հաշվարկը կատարելիս 47 օրվա մեջ ներառել է նաև հունիսի 11-ը: Խոսքը իրականում 1648 թ. հուլիսի 28-ի մասին է, որն էլ ուրբաթ օր է եղել:

³ Խոսքը օրենսգետների մասին է:

⁴ Թուրք. fetva, մուֆթիի արձակած որոշումը:

⁵ Թուրք. müftü, մահմեդական բարձրաստիճան հոգևորական, իրավաբան-կրոնագետ և Ղուրանի մեկնաբան, որը սովորաբար գլխավոր դատավորի դեր է կատարում դավանաբանական-իրավական գործերի քննության ժամանակ: Այստեղ պետք է հասկանալ բոլոր մուֆթիներից գլխավորին՝ Մեծ մուֆթին՝ օսմանյան Շեյխու ուլ Իսլամին, որի պարտականությունն էր պետական միջոցառումներին տալ օրենքի ուժ և հետևել, որ դրանք բխեն իսլամի ոգուց:

⁶ Օսմանյան Շեյխու ուլ Իսլամ Հաջի Աբդուռահիմն է (1647-1649) (թուրք. Hacı Abdürrahim Efendi), որ ֆեթվա արձակեց սկզբում՝ Իբրահիմ սուլթանի գահընկեցության, ապա սպանության վերաբերյալ, տե՛ս **Esra Yakut**, Şeyhülislamlik: yenileşme döneminde devlet ve din, İstanbul, 2005, s. 34:

⁷ Օսմանյան Մեծ վեզիր Սոֆու Մեհմեդ կամ Մլկի Մեհմեդ փաշան է (թուրք. Sofu Mehmet Paşa կամ Mevlevi Mehmed Paşa), պաշտոնավարել է 1648 թ. օգոստոսի 7-1649 թ. մայիսի 21:

⁸ Թուրք. defterdar կամ başdefterdar, ֆինանսների նախարար:

⁹ Թուրք. yeniçeri ağası, ենիչերիական զորքի հրամանատար:

¹⁰ Մուրադ փաշան (թուրք. Kara Dev Murad) այս պաշտոնը ստանձնում է 1648 թ. դեկտեմբերից:

¹¹ «Օրագրություն», էջ 1-2:

Եւ յետ մետասան ատուրց, առեալ ընդ իւրեանս դահիճ եւ ընթացան ի բանդն. մուծին դահիճն առ նա: Եւ գնացեալ դահիճն մարտեաւ ընդ նմա. եւ իբրեւ ոչ կարաց յաղթել՝ յայնժամ բուռն յարեալ ի յերանացն եւ ճմլեալ նուաղեցոյց, եւ մեծաւ աղաղակաւ ընկեց ի գետնի: Ձի այսպէս դառն եւ սաստիկ մահուամբ խեղդամահ լեալ սպանաւ¹:

Եւ յօգոստոսի Ը յաւուր Գշի (երեքշաբթի– Գ. Ա.)² առեալ ընդ իւրեանս գՂարայ Ալի դահիճն և վաղվաղակի ընթացան ի բանտն, և մարտեաւ դահիճն և իբրև ոչ կարեր յաղթել, յերանացն բուռն հարեալ և ճմլեալ նվաղեցոյց ընկեցեալ ի գետնի և այսպէս դառն և սաստիկ մահուամբ խեղդամահ լեալ սպանաւ³:

Ամփոփենք. Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի 1648 թ. շարադրանքը ամբողջովին հիմնված է նույն թվականին Կ. Պոլսում, Քրիստոսատուր գրչի ձեռքով գրված և այժմ Յեյլի համալսարանի Բայնեկե գրադարանում պահվող Հայսմավուրքի (Z107.008) հիշատակարանի վրա: «Օրագրության» մեջ հիշատակագիր վկայությունների կիրարկումը հետագայի ընդմիջարկություն է: Երկու սկզբնաղբյուրում օսմանյան պատմությանը վերաբերող ժամանակագրական տվյալները ներկայացված են չնչին անճշտություններով, ուստի դրանք պետք է օգտագործել զգուշությամբ և ստուգելուց հետո միայն⁴:

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 163.

² Այստեղ արդեն Երեմիա Քյոմուրճյանը չի վրիպել. բացարձակապես վերացարկվելով վերը քննարկած իր հաշվարկներից՝ այս դեպքում նա Քրիստոսատուրի հիշատակած «յաւուր շաբաթու»-ից (1648 թ. հուլիսի 29-ից) հաշվել է 11 օր և ստացել 1648 թ. օգոստոսի 8-ը, որը եղել է երեքշաբթի: Սակայն Իբրահիմ սուլթանին այս օրը ոչ թե սպանել են, այլ ձերբակալել: Այս և մնացած մյուս դեպքերում օսմանյան պատմությանը աղերսվող բոլոր ժամանակագրական տվյալները ներկայացրել ենք՝ հիմք ընդունելով Ի. Հաքը Ուզունչարըլլի առաջարկած թվականները, տե՛ս **Hakkı Uzuncarsılı İ.**, Osmanlı Tarihi III, Cilt 1, Kısım: II, Ankara, 1998:

³ «Օրագրութիւն», էջ 4:

⁴ Հոդվածի առնչությամբ օգտակար խորհուրդների համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Մատենադարանի աշխատակից, բ.գ.դ. Գոհար Մուրադյանին և ԵՊՀ պրոֆ., պ.գ.դ. Հայրապետ Մարգարյանին:

**Гаяне Айвазян – Об одном неизвестном источнике
«Дневника» Еремии Челеповича Кемурчяна**

Содержание "Дневника" Еремии Кемурчяна 1648-го года полностью основано на памятнике Месяцеслова (Z107.008), написанном Кростосатуром в том же году в Константинополе, который в настоящее время хранится в библиотеке редких книг и рукописей Бейнеке Йельского университета. Свидетельства взятые из памятника были вставлены в текст "Дневника" в дальнейшем. При изучении обоих источников, нужно принять во внимание тот факт, что хронологические данные касающиеся истории Османской империи имеют незначительные расхождения.

**Gayane Ayvazyan – On an Unknown Source of
Jeremia Chelebi Qyomurtchyan's "Diary"**

The content of Yeremia Qyomurtchyan's "Diary" of 1648 is based entirely on the colophon of Menologium (Z107.008) written by Qristosatur in the same year in Constantinople, which is now kept in the Beinecke Library at Yale University. Pieces of evidence taken from the colophon have been inserted in "Diary" in future. While studying both sources, it is necessary to take into account that the chronological data relating to the history of the Ottoman Empire have minor divergences.